ՀՌՀ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

UNION OF OPERATORS

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԵՌՈՒՍԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԿ-Ի ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «27» ապրիլ 2023թ.

Ներածական

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (ՀՌՀ)՝ ի դեմս հանձնաժողովի նախագահ Տիգրան Հակոբյանի և «Հայաստանի օպերատորների միություն» ՀԿ-ն՝ ի դեմս տնօրեն Քրիստինե Գյոնջյանի (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն Հուշագիրը՝ Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի և «Հայաստանի օպերատորների միություն» ՀԿ-ի միջև համագործակցությունը զարգացնելու և ամրապնդելու նպատակով, որը կնպաստի նաև Կողմերի լիազորությունների արդյունավետ և գործուն կատարմանը:

Հիմնվելով փոխադարձ հարգանքի, վստահության և գործընկերության սկզբունքների վրա, Կողմերը՝ գործելով իրենց իրավասությունների շրջանակներում, պատրաստակամություն հայտնելով տեսալսողական մեդիա ոլորտում առաջընթաց ապահովելու համար միավորել ջանքերը՝ ստորագրեցին սույն Հուշագիրը հետեւյալի մասին.

Հոդված 1

Կողմերը համատեղ կքննարկեն տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող իրավական ակտերում առկա բացթողումները, տարընթերցումները, խնդրահարույց նորմերը, կմշակեն նոր նախագծեր և լուծումներ, ոլորտում՝ վարչարարություն իրականացնելու ժամանակ ծագող խնդիրների վերաբերյալ:

Հոդված 2

Տեսալսողական մեդիայի զարգացման վերաբերյալ Կողմերի տեսլականի ձեւավորման, իրավական եւ այլ խնդիրների քննարկումների եւ դրանց լուծումներ գտնելու նպատակով՝ Կողմերը համատեղ կքննարկեն տեսալսողական մեդիայի ոլորտին վերաբերելի հարցեր, վեր կհանեն խնդիրներ, դրանք լուծելու նպատակով կմշակեն համապատասխան վարքականոններ:

Հոդված 3

Տեսալսողական մեդիայի զարգացման համապարփակ քաղաքակնության մշակման նպատակով Կողմերը կստեղծեն ցանցային օպերատորների, հեռարձակողների և մուլտիպլեքս օպերատորների համագործակցության և շփման հարթակներ:

Հոդված 4

Կողմերը կստեղծեն ցանցային օպերատորների և ՀՌՀ ներկայացուցիչներից բաղկացած հանձնախումբ, որը հետամուտ կլինի Կողմերի համագործակցությանն ուղղված աշխատանքների կազմակերպմանը:

Հոդված 5

Սույն Հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի միջև լրացուցիչ գրավոր համաձայնությամբ:

ՀՌՀ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

UNION OF OPERATORS

Հոդված 6

Հուշագիրը կողմերի համար ֆինանսական կամ այլ գույքային պարտավորություններ չի ստեղծում, քաղաքացիական օրենսդրության իմաստով չի հանդիսանում գործարք եւ Կողմերի համար չի հանգեցնում քաղաքացիական իրավական հետեւանքների: Կողմերը, այնուամենայնիվ, խոստանում են օգտագործել բոլոր ողջամիտ և բարեխիղճ միջոցները, սույն Հուշագրի պարտավորությունները կատարելու համար:

Հոդված 7

Հուշագիրն օրինական ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և ուժի մեջ է այնքան ժամանակ, քանի դեռ Կողմերից մեկը չի հայտարարել իր մտադրությունը՝ այն դադարեցնելու մասին: Եթե Կողմերից մեկն անհրաժեշտ է համարում Հուշագիրը դադարեցնել, ապա նա Հուշագրի դադարեցումից 30 օր առաջ պետք է ծանուցի մյուս Կողմին: 30 օրյա ժամկետը լրանալուց հետո Հուշագիրը համարվում է դադարեցված:

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահ
Տիգրան Հակոբյան

«Հայաստանի օպերատորների միություն» ՀԿ տնօրեն
Քրիստինե Գյոնջյան